

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

1959 · 50 · 2009

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 25083/05)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

16 մարտ 2010

ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ

04/10/2010

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, Նախագահ,,
Boštjan M. Zupančič,
Alvina Gyulumyan,
Egbert Myjer,
Ineta Ziemele,
Luis Lgpez Guerra,
Ann Power, դատավորներ,
և Santiago Quesada, Բաժանմունքի քարտուղար,

2010թ. փետրվարի 23-ին կայացած դռնփակ նիստում,

Կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Գործն սկիզբ է առել 2005թ. հունիսի 21-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի քաղաքացի պրն. Վարդան Մամիկոնյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 25083/05 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացնում էր Երևանում գործող փաստաբան պրն. Ն. Բաղդասարյանը: ՀՀ կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. 2007թ. դեկտեմբերի 11-ին Երրորդ Բաժանմունքի նախագահն որոշեց գանգատն ուղարկել Կառավարությանը: Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Դատարանը նաև որոշեց իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1958թ. և ապրում է Երևանում:

5. 2003թ. օգոստոսի 17-ին քրեական գործ հարուցվեց՝ նախորդ օրը տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի առթիվ, որի արդյունքում մարդ էր զոհվել: Պուժող Պ-ն իր ընկեր Ժ-ի հետ քայլում էր փողոցով, երբ վրաերթի ենթարկվեց:

6. 2003թ. հոկտեմբերի 9-ին դիմումատուին, ով խնդրո առարկա մեքենայի վարորդն էր, առաջադրվեց մեղադրանք 242-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ ավտոմեքենա վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

7. Մի շարք վկաներ, ներառյալ երեք ականատեսներ Ժ-ն, Մ-ն և Օ-ն, նախաքննության ընթացքում ցուցմունքներ տվեցին: Վկա Ժ-ն նշեց, որ ինքը Պ-ի հետ քայլելիս է եղել, երբ նկատել է 70-80 կմ/ժ արագությամբ փողոցով ներքև սլացող ավտոմեքենան: Երբ մեքենան իրենցից 13 մետր հեռավորության վրա է եղել, կտրուկ թեքվելով, սլացել է իրենց վրա: Նրան հաջողվել է խույս տալ, իսկ Պ-ն վրաերթի է ենթարկվել: Մինչև վրաերթը արգելակման ձայն չի լսվել: Նմանաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև վկաներ Մ-ն և Օ-ն, բացառությամբ, որ վերջինս նշել է, որ մեքենան սլացել է 90-100 կմ/ժ արագությամբ: Դիմումատուի և վկա Օ-ի միջև առերեսում պետք է իրականացվեր, սակայն վերջինս չի ներկայացել:

8. 2003թ. դեկտեմբերի 25-ին մեղադրական եզրակացությունը հաստատվեց և գործն ուղարկվեց Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

9. 2004թ. հոկտեմբերի 18-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճռով դիմումատուն մեղավոր ճանաչվեց առաջադրված մեղադրանքներում և դատապարտվեց ազատազկման երկու տարի ժամկետով: Դատավճռի հիմքում դրվել են վկաներ Ժ-ի և Մ-ի, երեք այլ վկաների, դատաավտոտեխնիկական և դատաբժշկական փորձագետների տված ցուցմունքերը, ովքեր հարցաքննվել էին դատարանում, վկա Օ-ի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքը, դատաավտոտեխնիկական և դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները, ինչպես նաև դեպքի վայրի և դիմումատուի ավտոմեքենայի զննության արձանագրությունները:

10. Դիմումատուն բողոք ներկայացրեց, որում բարձրացրեց վկա Օ-ի չներկայանալու հարցը:

11. 2004թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը որոշեց առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ առանց

բավարարման: Ինչ վերաբերում է վկա Օ-ի առերեսմանը չներկայանալուն, Վերաքննիչ դատարանը գտավ.

> «[Վկա Օ-ն] հայտնել է ... որ իրոք չի կարողացել գալ առերեսման, սակայն ցանկանում է նշել, որ [դիմումատուն] ոստիկանության աշխատակից է, ունի կապեր և կարող է վնաս տալ իր ընտանիքին: 16.12.2003թ. ժամը 12.20-ի սահմաններում համայնքի դատախազության շենքի մոտ նկատել է [դիմումատուին] և նրա մոտ հավաքված տղամարդկանց[: Հ]ասկանալով այդ տղամարդկանց հավաքվելու պատճառը ինքը մեքենայից չի իջել և հեռացել է [այդ տեղից]: Պատրաստ է ցուցմունքները առերես պնդել [դիմումատուի] հետ առերեսման ժամանակ, այդ թվում նաև դատարանում, եթե ապահովվի իր անվտանգությունը:
>
> Գործում առկա [(գ.թ. 176ա)] տեղեկանքի համաձայն [վկա Օ-ի] և [դիմումատուի] առերեսումը անհնարին է դարձել»:

12. 2004թ. դեկտեմբերի 31-ին վերը նշված դատավճռի դեմ դիմումատուն վճռաբեկ բողոք բերեց: Բողոքում նա նշեց է, որ դատավճիռն անօրինական է, քանի որ կայացվել է դատավարական նորմերի էական խախտմամբ: Դիմումատուն խնդրեց բեկանել առաջին ատյանի դատարանի դատավճիռը և նոր դատավճիռ կայացնել: Նա նաև խնդրեց բեկանել Վերաքննիչ դատարանի դատավճիռը: Դիմումատուն նշել է, որ բողոքի հիմնական փաստարկները կներկայացնի լրացուցիչ բողոքում՝ Վերաքննիչ դատարանի դատավճիռը ստանալուց հետո:

13. 2005թ. հունվարի 4-ի նամակով Վերաքննիչ դատարանի դատավճիռն ուղարկվեց դիմումատուին:

14. 2005թ. մարտի 2-ին համապատասխան փոստային ծառայության ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն փոստային ծառայությունը այդ նամակը ստացել է 2005թ. հունվարի 7-ին և դիմումատուին է հանձնել 2005թ. հունվարի 10-ին:

15. 2005թ. հունվարի 12-ին, ի լրումն իր՝ 2004թ. դեկտեմբերի 31-ի վճռաբեկ բողոքի, դիմումատուն լրացուցիչ բողոք ներկայացրեց, որը բաղկացած էր ութ էջանոց իրավական փաստարկներից: Դիմումատուն նշել էր, որ դատավճռի պատճենը նա ստացել է 2005թ. հունվարի 7-ին: Նա, ի թիվս այլոց, գանգատվել է, որ վկա Օ-ի նախաքննության ժամանակ տված ցուցմունքները հիմք են հանդիսացել իր դատապարտման համար: Սակայն գործի քննության որևէ փուլում նա հնարավորություն չի ունեցել հարցաքննել այդ վկային:

16. 2005թ. փետրվարի 4-ին Վճռաբեկ դատարանը քննեց 2004թ. դեկտեմբերի 31-ի բողոքը և որոշեց թողնել այն առանց բավարարման, գտնելով որ.

«[Դիմումատուի] բողոքի պատճառաբանությունը այն մասին, որ դատավճիռն անօրինական է քանի որ կայացվել է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ, ուստի առաջին ատյանի դատարանի դատավճիռը պետք է բեկանվի և կայացվի նոր դատավճիռ, անհիմն է: ... Քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածը պարզաբանել է քրեադատավարական օրենքի էական խախտման բովանդակությունը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը շարադրել է կոնկրետ այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման: Չնայած դրան, [դիմումատուն] վճռաբեկ բողոքում չի նշել, թե ինչ հիմքով պետք է վճռաբեկ դատարանը ... բեկանի վերաքննիչ դատարանի դատավճիռը և գործն ուղարկի նոր քննության: Ընդ որում, վճռաբեկ դատարանը [դիմումատուի] բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանի դատավճիռը վերանայում է բողոքում նշված հիմքերի սահմաններում ... »:

17. Վճռաբեկ դատարանը այնուհետև գտավ, որ.

« ... ինչ վերաբերում է ի լրումն [2004թ. դեկտեմբերի 31-ի] բողոքի ներկայացված նոր վճռաբեկ բողոքի, ապա այն բերվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածով սահմանված բողոքարկման ժամկետի խախտումով, ուստի վճռաբեկ դատարանի կողմից այդ բողոքը քննության չի առնվում»:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՀՀ քրեական օրենսգիրք

242-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ավտոմեքենա վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Բ. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի խնդրո առարկա ժամանակահատվածում գործող խմբագրությամբ համապատասխան դրույթները սահմանում են հետևյալը.

Հոդված 174. Ժամկետը բաց թողնելու հետևանքները և դրա վերականգնման կարգը

«1. Ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում:

2. Բաց թողնված ժամկետի վերականգնման համար շահագրգիռ անձը միջնորդությամբ կամ խնդրանքով դիմում է վարույթն իրականացնող մարմնին: ...

3. Հարգելի պատճառով բաց թողնված ժամկետը պետք է վերականգնվի վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ շահագրգիռ անձի միջնորդությամբ: ... »

Հոդված 216. Առերեսում

«1. Քննիչն իրավունք ունի կատարել նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում»:

Հոդված 332. Չներկայացած վկայի, փորձագետի, մասնագետի բացակայությամբ գործի քննության հնարավորության մասին հարցի լուծումը

«1. Դատական քննությանը հրավիրված վկաներից որևէ մեկի, փորձագետի, մասնագետի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Դատական քննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որևէ մեկի չներկայանալը չի խոչընդոտի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:

Հոդված 342.Վկայի ցուցմունքների հրապարակումը

«1. Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը ... թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների և դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում»:

Հոդված 402. Վերաքննիչ դատարանի դատավճռի կամ որոշման օրինական ուժի մեջ մտնելը և դրանք կողմերին հանձնելը

«1. Վերաքննիչ դատարանի դատավճիռը կամ որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դրանց հրապարակման պահից հետո՝ տասնօրյա ժամկետում:

2. Վերաքննիչ դատարանի դատավճիռը կամ որոշումը հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում հանձնվում է դատապարտյալին, արդարացվածին, նրանց պաշտպաններին և օրինական ներկայացուցիչներին ..., եթե նրանք մասնակցել են գործի քննությանը վերաքննիչ դատարանում:»

Հոդված 407. Վճռաբեկ բողոքը

«3. Այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքը ... ժամկետանց է, վճռաբեկ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»:

Հոդված 412. Դատավճռի բողոքարկման ժամկետները

«1. Վերաքննիչ դատարանի ... դատավճռի կամ որոշման դեմ վճռաբեկության կարգով բողոք կարող է ներկայացվել դատավճռի կամ որոշման հրապարակման օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում:

...

3. Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության»:

Հոդված 415. Վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները

«1. Վճռաբեկ դատարանը վերանայում է ... վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտաց դատավճիռները և որոշումները՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում: ...»

Գ. ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 23-ի թիվ 924-Ն որոշումը «ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնները հաստատելու մասին» (ուժի մեջ է եղել 2002թ. օգոստոսի 11-ից մինչև 2007թ. սեպտեմբերի 15-ը)

19. Որոշման 9.2 պարբերության համաձայն քաղաքային և գյուղական բնակավայրերում տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է 60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

Ի. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

20. Դիմումատուն բողոքեց, որ իր 2005թ. հունվարի 12-ին ներկայացրած լրացուցիչ փաստարկների չքննելը խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված երաշխիքները, որի համապատասխան դրույթները սահմանում են հետևյալը.

«Յուրաքանչյուր ոք, ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ... դատարանի կողմից ... արդարացի դատաքննության իրավունք ... »:

Ա. Ընդունելիությունը

21. Դատարանը նշում է, որ այս գանգատը ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է ճանաչվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի դիրքորոշումները

22. Կառավարությունը պնդեց, որ դիմումատուի 2005թ. հունվարի 12-ի լրացուցիչ բողոքը չքննելը համապատասխանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (Քր. դատ. օր.) 412-րդ հոդվածի համաձայն դիմումատուն տասնօրյա ժամկետում 2004թ. դեկտեմբերի 27-ի Վերաքննիչ դատարանի դատավճիռը Վճռաբեկ դատարանում բողոքարկելու հնարավորություն է ունեցել: 2004թ. դեկտեմբերի 31-ին նա բողոք է ներկալացրել, ինչը Վճռաբեկ դատարանի կողմից քննության է առնվել և թողնվել է առանց բավարարման: Ինչ վերաբերում է 2005թ. հունվարի 12-ին ներկայացված բողոքին, ապա այն բերվել է ժամկետանց, ուստի քննության չի առնվել: Ներպետական օրեսդրությամբ նախատեսված չէ ի լրումն նախնական բողոքի նոր բողոք ներկայացնելու ընթացակարգ: Ներպետական օրենսդրությամբ նույնիսկ սահմանված չէ «լրացուցիչ բողոք» հասկացությունը: Ճիշտ է, ներպետական օրենսդրությունը լրացուցիչ բողոքի տեսքով նոր փաստարկներ ներկայացնելու հնարավորություն տալիս է: Այնուամենայնիվ, դիմումատուն դա պետք է աներ սահմանված ժամկետներում:

23. Ավելին, քանի որ Վերաքննիչ դատարանի դատավճիռը դիմումատուին է հանձնվել բողոքարկան համար նախատեսված ժամկետի ավարտից հետո, դիմումատուն Քր. դատ. օր.-ի 174-րդ հոդվածի համաձայն հնարավորություն է ունեցել դիմել Վճռաբեկ դատարան՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու խնդրանքով: Դատական պրակտիկայում դատավճռի հանձնման ուշացումը պատշաճ հիմք է բաց թողնված ժամկետը վերականգնելու համար: Սակայն, դիմումատուն չի օգտվել նման հնարավորությունից:

24. Դիմումատուն պնդեց, որ ինքը բողոքը ներկայացրել է սահմանված ժամկետում, այն է՝ 2004թ. դեկտեմբերի 31-ին և իրավունք ուներ լրացուցիչ բողոքում նախնական բողոքի առնչությամբ նոր փաստարկներ ներկայացնելու: Նման փաստարկները կարող են ներկայացվել ցանկացած պահի, սակայն բավականաչափ վաղ, որպեսզի դատարանը դրանք ուսումնասիրելու հնարավորություն ունենա: Վերաքննիչ դատարանի 2004թ. դեկտեմբերի 27-ի դատավճռի պատճենը իրեն հանձվել է ոչ թե երեք օրվա ընթացքում, ինչպես պահանջվում է Քր. դատ. օր.-ի 412-րդ հոդվածով, այլ տասնչորս օր հետո, այն է բողոքարկման համար նախատեսված ժամկետից ուշ: Հետևաբար, դատավճռի պատճենը ստանալուց հետո ստիպված է եղել մեկ այլ փաստաթուղթ ներկայացնել, որը առանձին բողոք չի եղել, այլ լրացուցիչ փաստարկներ են եղել, որոնք ներկայացվել են ի լրումն 2004թ. դեկտեմբերի 31-ին

բերված բողոքի: Երբևէ չի պնդել, որ Հայաստանի Հանրապետության քրեակադատավարական օրենսդրությունը, որպես այդպիսին, նախատեսում է «ի լրումն» կամ «լրացուցիչ» բողոք ներկայացնելու իրավունք: 2005թ. հունվարի 12-ին ներկայացված փաստարկները հանդիսացել են օրենքով սահմանված ժամկետում՝ այն է 2004թ. դեկտեմբերի 31-ին բերված բողոքի բաղկացուցիչ մասը, և Վճռաբեկ դատարանը չպետք է դրանք համարեր իբրև առանձին բողոք: Հետևաբար, ինքն օգտվել է ի լրումն նախնական բողոքի լրացուցիչ փաստարկներ ներկայացնելու իր իրավունքից, սակայն դրանք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ Վճռաբեկ դատարանի կողմից քննության չեն առնվել:

2. Դատարանի գնահատականը

25. Դատարանը կրկնում է, որ «դատարանի իրավունքը», որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ: Այն ենթակա է սահմանափակումների, մասնավորապես, երբ քննարկվում են բողոքի ընդունելիության պայմանները, քանի որ այն իր բնույթով թողնված է պետության կարգավորմանը, որն այս առնչությամբ ունի հայեցողության որոշակի սահման: Սակայն, այդ սահմանափակումները չպետք է անձի դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակեն կամ նվազեցնեն այն կերպ կամ այն չափով, որ խախտվի իրավունքի բուն էությունը. վերջապես, նման սահմանափակումները չեն համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե դրանք չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև առկա չէ ողջամիտ համամասնություն (տե՛ս *Levages Prestations Services v. France*, 1996թ. հոկտեմբերի 23, § 40, Վճիռների և որոշումների ժողովածու 1996-V, և *Brualla Gómez de la Torre v. Spain*, 1997թ. դեկտեմբերի 19, § 33, Վճիռների և որոշումների ժողովածու 1997-VIII): Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն ունենա (տե՛ս *Bellet v. France*, 1995թ. դեկտեմբերի 4, § 36, Սերիա A թիվ 333-B):

26. Այնուհետև Դատարանը կրկնում է, որ ներպետական օրենսդրության մեկնաբանումը թողնված է ներպետական մարմիններին, և առաջին հերթին դատարաններին, և որ Դատարանը կամայականության բացակայության դեպքում դրանք չի փոխարինի իր իսկ մեկնաբանություններով: Մասնավորապես,

դա վերաբերում է դատարանների կողմից այնպիսի դատավարական նորմերի մեկնաբանմանը, ինչպիսիք են փաստաթղթերի ներկայացման կամ բողոքարկման համար սահմանված ժամկետները (տե՛ս ի թիվս այլոց, *Tejedor García v. Spain*, 1997 դեկտեմբերի 16, § 31, Վճիռների և որոշումների ժողովածու 1997-VIII):

27. Դիմումների, բողոքների կամ այլ գանգատների ներկայացման համար սահմանված ժամկետները, անկասկած, նպատակ ունեն ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը և համապատասխանությունը, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքին: Շահագրգիռ անձինք պետք է ակնկալեն, որ այդ կանոնները կկիրառվեն: Սակայն, նման կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտ հանդիսանան դատավարության մասնակիցների համար առկա պաշտպանության միջոցներից օգտվելիս (տե՛ս *Pérez de Rada Cavanilles v. Spain*, 1998թ. հոկտեմբերի 28, § 45, Վճիռների և որոշումների ժողովածու 1998-VIII).

28. Վերադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ խնդրո առարկա ժամանակահատվածում գործող Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության համաձայն դիմումատուն 2004թ. դեկտեմբերի 27-ի Վերաքննիչ դատարանի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք բերելու համար տաս օր ժամանակ է ունեցել: 2004թ. դեկտեմբերի 31-ին, վճռաբեկ բողոք բերելով, դիմումատուն բավարարել է այդ պահանջը, սակայն նա չի ներկայացրել մանրամասն փաստարկներ: Այդ փաստարկները ներկայացվել են տասնօրյա ժամկետի ավարտից հետո, այն է՝ 2005թ. հունվարի 12-ին, և Վճռաբեկ դատարանի կողմից քննության չեն առնվել:

29. Դատարանը, նախ և առաջ, դիտարկում է, որ թեպետ տասնօրյա ժամկետը երկար չէր, այն ինքնին այնքան էլ կարճ չէր, որպեսզի զրկեր դիմումատուին բողոքարկման ընթացակարգից օգտվելու իրական և արդյունավետ հնարավորությունից: Իրականում, բողոքարկման համար սահմանված կարճ ժամկետները ընդհանուր են Բարձր պայմանավորվող կողմերի բողոքարկման համակարգերի համար (տե՛ս *Bačev v. the Former Yugoslav Republic of Macedonia* (որոշում), թիվ 13299/02, 2006թ. փետրվարի 14):

30. Այնուհետև, Դատարանը դիտարկում է, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար սահմանված տասնօրյա ժամկետի հաշվարկը սկսել է, ոչ թե Վերաքննիչ դատարանի դատավճռի հանձման օրվանից, այլ վերջինիս հրապարակման օրվանից:

Դատարանը այս կանոնը ևս ինքնին չի համարում 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, եթե այն ուղեկցվել է բավարար երաշխիքներով, որոնք իրավունք են տալիս բողոքարկող անձանց օգտվելու բողոքարկման ատյանի արդյունավետ մատչելիությունից, ներառյալ վերջիններիս կողմից հիմնավոր բողոքներ ներկայացնելու հնարավորության տրամադրումը: Այս իմաստով Դատարանը դիտարկում է, որ Քր. դատ. օր.-ի 402-րդ հոդվածի 2-րդ մասը պահանջում է, որպեսզի Վերաքննիչ դատարանի դատավճիռը հրապարակման օրվանից ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում հանձնվի դատապարտյալին: Ավելին, Քր. դատ. օր.-ի 174-րդ հոդվածը հարգելի պատճառով բաց թողնված ժամկետը վերականգնելու խնդրանքի հնարավորություն է տալիս:

31. Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ Քր. դատ. օր.-ի 402-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները չեն պահպանվել դիմումատուի գործում: Ավելին, ոչ միայն 2004թ. դեկտեմբերի 27-ի Վերաքննիչ դատարանի դատավճռի պատճենը դիմումատուին չի հանձնվել եռօրյա ժամկետում, այլև այն վերջինիս է հանձնվել բողոքարկման համար սահմանված տասնօրյա ժամկետի ավարտից հետո միայն: Այսպիսով, այդ տաս օրերի ընթացքում դիմումատուն իր մոտ չի ունեցել վերոնշյալ դատավճռի պատճենը, որն իրեն մինչև բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը այդ դատավճռի դեմ պատճառաբանված բողոք ներկայացնելու հնարավորություն կտար: Նման պարագայում դիմումատուին չի կարելի մեղադրել իր՝ 2004թ. դեկտեմբերի 31-ի բողոքում մանրամասն փաստարկներ չներկայացնելու, և դա բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո անելու համար (տե՛ս, *mutatis mutandis, Hadjianastassiou v. Greece*, 1992թ. դեկտեմբերի 16, § 33, Սերիա A, թիվ 252):

32. Ինչ վերաբերում է Քր. դատ. օր.-ի 174-րդ հոդվածով սահմանված բաց թողնված ժամկետի վերականգնման խնդրանքի հնարավորությանը, ապա ճիշտ է, դիմումատուն նման խնդրանք չի ներկայացրել: Սակայն Դատարանը նկատում է, որ, ինչպես արդեն վերը նշվել էր, դիմումատուն, 2004թ. դեկտեմբերի 31-ին բողոք ներկայացնելով, բավարարել է բողոքարկման համար սահմանված տասնօրյա ժամկետի պահանջը: Այսպիսով, 2005թ. հունվարի 12-ին Վճռաբեկ դատարան ներկայացված փաստաթուղթը որպես այդպիսին բողոք չի եղել, այլ լրացուցիչ փաստարկներ են եղել՝ որոնք ներկայացվել են ի լրումն 2004թ. դեկտեմբերի 31-ի բողոքի: Կողմերը համաձայնվեցին, որ իրականում լրացուցիչ փաստարկներ ներկայացնելու հնարավորություն եղել է, չնայաց Կառավարության այն պնդմանը,

որ նման փաստարկները ևս պետք է ներկայացված լինեին օրենքով սահմանված միևնույն ժամկետում:

33. Այս իմաստով, այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ լրացուցիչ փաստարկներ ներկայացնելու ընթացակարգը որևէ կերպ կարգավորված չի եղել օրենքով: Որևէ հստակ կանոններ կամ պահանջներ սահմանված չեն եղել, թե ինչ ձևով պետք է ներկայացվեն նման փաստարկները կամ արդյոք որևէ ժամկետներ սահմանված են այդ փաստարկների ներկայացման համար: Մյուս կողմից, Քր. դատ. օր.-ի 174-րդ հոդվածում, մասնավորապես, խոսվում է հարգելի պատճառով բաց թողնված «ժամկետը» վերականգնելու հնարավորության մասին: Այսինքն դիմումատուին չի կարելի մեղադրել նման փաստարկներ ներկայացնելիս Քր. դատ. օր.-ի 174-րդ հոդվածով նախատեսված խնդրանքի չներկայացման համար: Ամեն դեպքում, եթե նույնիսկ ենթադրենք, որ բողոքարկման համար սահմանված ժամկետները կիրառելի են եղել նաև լրացուցիչ փաստարկներ ներկայացնելիս, ապա Դատարանը տարակուսանք է հայտնում, որ սույն գործի պարագայում դիմումատուն պարտավոր էր Քր. դատ. օր.-ի 174-րդ հոդվածով նախատեսված խնդրանք ներկայացնել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր կողմից ժամկետանց փաստարկներ ներկայացնելու միակ պատճառը եղել է իշխանությունների կողմից վիճարկվող դատավճռի պատճենը պատշաճ ժամկետում իրեն չհանձնելը:

34. Միևնույն ժամանակ Դատարանը նշում է, որ դիմումատուն իր՝ 2004թ. դեկտեմբերի 31-ի բողոքում հստակ նշել էր, որ նա Վերաքննիչ դատարանի դատավճռի պատճենն ստանալուն պես մտադիր է լրացուցիչ փաստարկներ ներկայացնել: Ավելին, դիմումատուի կողմից 2005թ. հունվարի 12-ին ներկայացված փաստաթուղթը, թեպետ վերնագրված էր «վճռաբեկ բողոք», հստակ սահմանում էր, որ այն ներկայացված էր ի լրումն 2004թ. դեկտեմբերի 31-ի բողոքի: Ավելին, 2005թ. հունվարի 12-ին ներկայացրած լրացուցիչ փաստարկներում դիմումատուն նշել էր, որ դատավճռի պատճենն իրեն է հանձնվել 2005թ. հունվարի 7-ին միայն: Ճիշտ է, առկա է որոշակի անհամապատասխանություն դիմումատուի կողմից 2005թ. հունվարի 12-ին ներկայացված լրացուցիչ փաստարկներում մատնանշած օրվա և փոստային բաժանմունքի կոմից 2005թ. մարտի 2-ին տրված տեղեկանքում նշված օրվա միջև (տե՛ս վերը նշված պարբերություն 14): Այնուամենայնիվ, Դատարանը նման անհամապատասխանությունը որոշիչ չի համարում, քանի որ երկու օրերն էլ բողոքարկման համար սահմանված ժամկետներից դուրս են: Վերջապես, Դատարանը նշում է, որ չնայած լրացուցիչ

փաստարկներ ներկայացնելու վերաբերյալ հստակ կանոնների բացակայությանը, դիմումատուն այդ փաստարկները առանց անհարկի ուշացման, այն է՝ Վերաքննիչ դատարանի դատավճռի պատճենն ստանալուց ընդամենը մի քանի օր հետո ներկայացնելով՝ գործել է բարեխղճորեն:

35. Վճռաբեկ դատարանը, սակայն, անտեսել է վերը նշված բոլոր հանգամանքները և շատ հակիրճ պատճառաբանմամբ մերժել է դիմումատուի կողմից 2005թ. հունվարի 12-ին ներկայացված լրացուցիչ փաստարկների քննությունը: Ուստի, Վճռաբեկ դատարանի կողմից գործի քննությունը սահմանափակված է եղել միայն 2004թ. դեկտեմբերի 31-ի բողոքում մատնանշված հիմքերի սահմաններով, ինչպես որ պահանջում է Քր. դատ. օր.-ի 415-րդ հոդվածի 1-ին մասը (տե՛ս, ի հակադրումն, վերը նշված *Bačev*): Այդ բողոքը, սակայն, ինչպես արդեն վերը նշվեց, ըստ էության որևէ իրավական փաստարկ չէր պարունակում՝ դիմումատուից անկախ պատճառներով:

36. Հաշվի առնելով վերոնշյալ համգամանքները՝ Դատարանը գտավ, որ դիմումատուի կողմից 2005թ. հունվարի 12-ին ներկայացված լրացուցիչ փաստարկների քննության մերժումը անհամաչափորեն խախտել է դիմումատուի դատարանի մատչելիության իրավունքը:

37. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ (Դ) ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

38. Դիմումատուն բողոքեց, որ իրեն հնարավորություն չի տրվել հարցաքննել վկա Օ-ին, ում՝ նախաքննության ժամանակ տված ցուցմունքները գործի քննության բոլոր փուլերում դրվել են իր մեղադրանքի հիմքում: Նա վկայակոչեց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետը, որը համապատասխանաբար սահմանում է.

> «3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.
>
> ...
>
> (դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության...»

Ընդունելիությունը

1. Կողմերի դիրքորոշումները

39. Կառավարությունը պնդեց, որ վկա Օ-ն չի համարվել պատահարի միակ ականատեսը, ով դիմումատուի դեմ ցուցմունք է տվել: Ավելին, իր կողմից տրված ցուցմունքները էապես չեն հակասել այլ վկաների կողմից տրված ցուցմունքներին, որոնց դիմումատուն հարցաքննել էր դատաքննությունների ընթացքում: Վկա Օ-ի տված ցուցմունքը չի եղել գործով միակ ապացույցը, որը դատարանների կողմից օգտագործվել է ճշմարտության բացահայտման համար: Դատարանները որոշում կայացնելիս հիմնվել են երկու այլ ականատես վկաների ցուցմունքների, դեպքի վայրում հայտնաբերված արյան հետքերի և ավտոմեքենայի լուսացրիչի ապակու կտորների զննության արձանագրությունների վրա, որոնք համապատասխանում են այլ վկաների ցուցմունքներին, և նույնիսկ առանց վերոնշյալ ցուցմունքի բավարար են վրաերթի մեխանիզմը վերլուծելու և իրավական գնահատական տալու համար: Ուստի, դիմումատուի մեղավորությունն ապացուցելիս վկա Օ-ի ցուցմունքը որևէ էական դեր չի խաղացել, և, հետևաբար, առկա չէ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի խախտում:

40. Դիմումատուն պնդեց, որ յուրաքանչյուր ապացույց դատարանների կողմից օգտագործվել է կոնկրետ փաստի հաստատման համար: Ուստի, վկա Օ-ի ցուցմունքը, համաձայն որի ինքը մեքենան վարելիս գերազանցել է թույլատրելի արագությունը, այն է՝ սլացել է 90-100 կմ/ժ արագությամբ, հիմք է հանդիսացել ավտոտեխնիկական փորձաքննության փորձագետի, և այնուհետև դատարանների համար եզրակացնելու, որ ինքը խախտել է երթևեկության կանոնները: Եթե չլիներ վկա Օ-ի ցուցմունքը դատարանները այլ եզրահանգման կգային, մասնավորապես, այն, որ նա չի խախտել երթևեկության կանոնները: Հետևաբար, իր գործողություններում հանցակազմ չէր լինի և ինքը կարդարացվեր: Ուստի, վկա Օ-ին հարցաքննելու հնարավորության բացակայությունը հանգեցրել է 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի խախտման:

2. Դատարանի գնահատականը

41. Դատարանը կրկնում է, որ ապացույցների ընդունելիության հարցը առաջին հերթին կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ, և որ, որպես կանոն, ապացույցների գնահատման հարցը թողնված է ներպետական դատարաններին: Դատարանի խնդիրն է պարզել, թե որքանով է քննությունն ընդհանուր առմամբ, ներառյալ ապացույցների ձեռքբերման եղանակը, եղել արդար (տե՛ս *Asch v. Austria*, 1991թ. ապրիլի 26, §

26, Սերիա Ա, թիվ 203, և *Edwards v. the United Kingdom*, 1992թ. դեկտեմբերի 16, § 34, Սերիա Ա, թիվ 247-Բ):

42. Բոլոր ապացույցները, որպես կանոն, պետք է ներկայացվեն մեղադրյալի մասնակցությամբ գործի հրապարակային քննության ընթացքում՝ հակափաստարկ ունենալու հնարավորությամբ: Սակայն սա չի նշանակում, որ որպեսզի վկաների ցուցմունքներն օգտագործվեն իբրև ապացույց, դրանք անպայման պետք է տրված լինեն միայն հրապարակային դատաքննության ընթացքում: Նախաքննության ընթացքում տրված նման ցուցմունքներն իբրև ապացույց դիտարկելը ինքնին չի հակասում 6-րդ հոդվածի 1-ին մասին և 3-րդ մասի (դ) կետին, եթե երաշխավորվել են պաշտպանական կողմի իրավունքները: Որպես կանոն, այս իրավունքների իրականացումը պահանջում է, որ մեղադրյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վիճարկելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկային, ինչպես ցուցմունք տալու պահին, այնպես էլ գործի քննության հետագա փուլերում (տե՛ս *Delta v. France*, 1990թ. դեկտեմբերի 19, § 36, Սերիա Ա, թիվ191-Ա):

43. Վերադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտմանբ անզգուշությամբ մարդու մահ առաջացնելու համար դիմումատուի դատապարտման հիմքում, ի թիվս այլոց, դրվել է վկա Օ-ի կողմից նախաքննության ժամանակ տրված ցուցմունքը: Դիմումատուի և այդ վկայի առերեսում չի կատարվել: Վերջինս, չներկայանալով դատարան, նաև պնդել է, որ վախենում է իր հանդեպ հաշվեհարդարից: Ուստի, գործի քննության որևէ փուլում դիմումատուն այդ վկային հարցաքննելու հնարավորություն չի ունեցել:

44. Այնուամենայնիվ, սխալ է պնդելը, որ դիմումատուի դատապարտման համար վճռորոշ է եղել վկա Օ-ի ցուցմունքը (տե՛ս *Verdam v. the Netherlands* (որոշում), թիվ 35253/97, 1999թ. օգոստոսի 31, և, ի հակադրումն, *Van Mechelen and Others v. the Netherlands*, 1997թ. ապրիլի 23, § 63, Վճիռների և որոշումների ժողովածու 1997-III): Նրա դատապարտման հիմքում դրվել են նաև երկու կարևոր ականատես վկաների՝ Ժ-ի և Մ-ի ցուցմունքները, երեք այլ վկաների ցուցմունքները, ինչպես նաև մի շարք փորձագետների եզրակացությունները և զննությունների արձանագրությունները (տե՛ս վերը նշված պարբերություն 9): Ուստի, վկա Օ-ի ցուցմունքները հաստատված են եղել գործում առկա այլ, հավասարապես կարևոր ապացույցներով (տե՛ս *Artner v. Austria*, 1992թ. օգոստոսի 28, § 22, Սերիա Ա, թիվ 242-Ա, և

Doorson v. the Netherlands, 1996թ. մարտի 26, § 80, Վճիռների և որոշումների ժողովածու 1996-II):

45. Ավելին, ի հակադրումն դիմումատուի պնդումների՝ վկա O-ի ցուցմունքը միակը չի եղել, որի արդյունքում դատարանները հանգել են այն եզրակացության, որ դիմումատուն խախտել է ճանապարհային երթևեկության կանոնները: Իրականում, վկա O-ի ցուցմունքը էական հակասության մեջ չի եղել երկու այլ ականատես վկաների տված ցուցմունքների հետ, քանի որ նրանք երեքն էլ հաստատել են, որ դիմումատուն մեքենան վարելիս գերազանցել է օրենքով թույլատրված առավելագույն 60 կմ/ժ արագությունը: Նրանց ցուցմունքներում առկա աննշան հակասությունը, այն է՝ 70-80կմ/ժ, թե 90-100 կմ/ժ արագությունը, որևէ ազդեցություն չի ունեցել ներպետական դատարանների կողմից արված եզրահանգումների համար (տե՛ս վերը նշված պարբերություններ 9 և 7):

46. Դատարանը եզրակացնում է, որ այն հանգամանքը, որ դիմումատուն չի կարողացել հարցաքննել վկա O-ին, սույն գործի պարագայում, չի սահմանափակել պաշտպանության կողմի իրավունքներն այնչափ, որ հանգեցնի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի խախտման:

47. Հետևաբար, գանգատի այս մասը ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն:

III. ԹԻՎ 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

48. Դատարանը նշում է, որ դիմումատուն նույն փաստական հանգամանքների համատեքստում վկայակոչել է նաև Թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածը՝ պնդելով, որ 2005թ. հունվարի 12-ին ներկայացված լրացուցիչ բողոքը չքննելը հանգեցրել է նաև այդ հոդվածի խախտման, որը սահմանում է.

Թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդված

«1. Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից: Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով:

2. Այդ իրավունքներից կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված աննշան հանցագործությունների առնչությամբ, կամ երբ տվյալ անձը դատվել է ամենաբարձր ատյանի կողմից, որը հանդես է եկել

որպես առաջին ատյանի դատարան, կամ դատապարտված է եղել այդ անձի արդարացման դեմ վճռաբեկ գանգատի քննարկումից հետո»:

49. Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ այս բողոքը բխում է սույն գործով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա բարձացված հիմնական խնդրից: Ելնելով 6-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ արված եզրակացությունից՝ Դատարանը գտում է, որ չկա Թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածի ներքո գանգատի ընդունելիության և ըստ էության առանձին քննության անհրաժեշտություն:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

50. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

51. Դիմումատուն պահանջեց 30,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում, քանի որ ինքը դատապարտվել էր երկու տարի ազատազրկման:

52. Կառավարությունը պնդեց, որ դիմումատուն չի ներկայացրել որևէ փաստարկ կամ ապացույց ի հաստատումն իր այն պնդման, որ նա կրել է ոչ նյութական վնաս: Նույնիսկ եթե ենթադրենք, որ դիմումատուն կրել է որոշակի տառապանք, ապա դա արդյունք է եղել նրա օրինական ազատազրկման, քանի որ նրա մեղադրանքը հիմնված է եղել անհերքելի ապացույցների վրա:

53. Դատարանը գտնում է, որ դիմումատուն, անկասկած, կրել է ոչ նյութական վնաս սույն վճռով ճանաչված Կոնվենցիայի խախտման հետևանքով: Առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը որոշում է դիմումատուին տրամադրել 1,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

54. Դատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է

հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք հարյուրերորդական տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Հայտարարում է ընդունելի 2005թ. հունվարի 12-ին դիմումատուի կողմից ներկայացված լրացուցիչ բողոքի չքննմանն առնչվող գանգատը, և անընդունելի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի ներքո ներկայացված գանգատը.

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում.

3. Վճռում է, որ չկա Թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածի ներքո գանգատի ընդունելիության և ըստ էության առանձին քննության անհրաժեշտություն.

4. Վճռում է, որ
   (ա) պատասխանող պետությունը, վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուին պետք է վճարի 1,000 (հազար) եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ փոխարկված ՀՀ դրամի վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ գումարած նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը.
   (բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի նշված գումարի պարզ տոկոս Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի չափով պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք հարյուրերորդական տոկոս.

5. Մերժում է դիմումատուի արդարացի փոխհատուցման պահանջի մնացյալ մասը.

Կատարված է անգլերեն, գրավոր ծանուցվել է 2010թ. մարտի 16-ին՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի:

Santiago Quesada
Քարտուղար

Josep Casadevall
Նախագահ